Պետականության մարտահրավերը

ՀՀ Նախագահի նախկին խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը՝ հայկական քաղաքականության զարգացման մասին

Պատմաբան Ժիրայր Լիպարիտյանը 1991 թ.-ին հրավիրվեց Հայաստան՝ աշխատելու նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի վարչակազմում: Ժամանակակից հայկական հետազոտությունների եւ փաստագրման Զորյան ինստիտուտի համահիմնադիր եւ տնօրեն Ժ. Լիպարիտյանը եղել է նաեւ Հայ Յեղափոխական Դաշնակցության անդամ՝ մինչեւ 1988 թ. այդ կուսակցությունից իր հրաժարականը:

Լիպարիտյանը եղավ Լ. Տեր-Պետրոսյանի վարչակազմում ամենից ավելի երկար գործած սփյուռքահայը: Նախ՝ որպես Նախագահի խորհրդական, ապա՝ որպես ավագ խորհրդական պաշտոնավարելու յոթ տարիների ընթացքում նա հաճախ է ենթարկվել քննադատության: Միաժամանակ, նրան է վերագրվում Հայաստանի արտաքին քաղաքականության մշակման մեջ որոշիչ դեր կատարած լինելու պատիվը: Ներկայումս նա Նյու Յորքում գտնվող Արեւելք-Արեւմուտք (East West) ինստիտուտի ավագ գիտաշխատող է, IREX-ի ավագ խորհրդատու եւ վերջերս ստացել է «ՄաքԱրթուր» հիմնադրամի դրամաշնորհը՝ հետազոտության եւ «Կոնֆլիկտի անատոմիա» նոր գիրքը գրելու համար, որի նպատակով էլ վերջերս մեկնել էր Երեւան, Բաքու եւ այլ քաղաքներ:

Նրա առաջին գիրքը «Ղարաբաղյան գործ»-ն էր (Քեմբրիջ, Զորյան ինստիտուտ, 1988 թ.)՝ գրված Հայաստանի ժողովրդական շարժման սկզբում: Նրա հաջորդ՝ «Հայաստանը խաչուղիներում» (Քեմբրիջ, «Բլու Քրեյն Բուքս», 1991 թ.) գիրքը անկախությանը նախորդած շրջանի եւ Շարժման ղեկավարության առաջին վերլուծությունն էր: Մայիսին «Բլու Քրեյն Բուքս» հրատարակչությունը լույս կընծայի «Պետականության մարտահրավերը» գիրքը, որն անկախությանը հաջորդած տարիների՝ Հայաստանի ու հայության քաղաքական մտածողության մի վերլուծություն է:

1997 թ. սեպտեմբերին իր հրաժարականից հետո սա նրա առաջին հանրային հարցազրույցն է:

AIM- Ձեր հրաժարականի օրերին բամբասանքներ էին շրջում, որ Դուք հեռանում եք՝ զիջելով կամ ռուսներին, կամ Հայաստանի ներքին ընդդիմությանը: Այդպե՞ս է:

ԼԻՊԱՐԻՏՅԱՆ- Իհարկե ոչ: Ես Հայաստան գնացի վեց ամսով, մնացի յոթ տարի: Ես քաղաքական ամբիցիաներ չունեի եւ չէի սիրում պաշտոնականությունը: Յոթ

տարին ավելին է, քան ի վիճակի էի: Հրաժարական եմ տվել՝ կրկին ընտանիքիս հետ լինելու համար:

Պրոբլեմն այն է, որ ճշմարտությունը որպեսզի արժանահավատ լինի, պետք է լինի նաեւ ճշմարտանման: Ես հասկանում եմ, որ մի միջավայրի համար, որը սիրում է խարդավանքներ եւ իշխանություն, իմ պատճառաբանությունը չափազանց պարզ էր հնչում:

-Առանց լիովին զարգացած ակադեմիական կամ ինտելեկտուալ կառույցների Հայաստանը հնարավորություն չունի օգտագործելու իր նախկին գործիչներին: Ինչո՞վ եք զբաղվել Ձեր հրաժարականից ի վեր:

-Վերադարձա Բոստոն եւ առաջին մի քանի ամիսը ոչինչ չարեցի: Հին կինոնկարներ էի դիտում եւ երաժշտություն լսում: Գնում էի վերջին յոթ տարում հրատարակված գրքերը, սակայն շատ կարդալ չէի կարողանում: Գիտաժողովների ելույթներ էի գրում Ջոն Հոփքինսի, Փրինսթոնի, Բերքլիի համալսարանների, ինչպես նաեւ Թբիլիսիում, Թեհրանում եւ Ստամբուլում կայացած գիտաժողովների համար:

Ես նաեւ երկու անգամ Երեւան գնացի: Առաջինը մոտ մեկ տարի առաջ էր. գնացել էի հրաժարվելու հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոնից, որը, գլխավոր խորհրդականի իմ պաշտոնից հրաժարական տալուց հետո, նախագահ Տեր-Պետրոսյանն ինձ խնդրել էր պահպանել: Ես այդ հրաժարականը ներկայացրի նոր նախագահին՝ Ռոբերտ Քոչարյանին, 1998 թ. ապրիլին: Յուրաքանչյուր նախագահ իրավունք ունի նշանակելու իր իսկ դեսպաններին, հատկապես նրանց, որոնցից ակնկալվում է հատուկ առաքելությունների իրականացում: Նոր նախագահն ու ես քննարկեցինք մի շարք հարցեր: Ես նրան ասացի, որ պատրաստ եմ օգնելու, եթե նա դրա կարիքն ունենա:

1998 թ. սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին գրել եմ «Պետականության մարտահրավերը» գիրքը, որը շուտով լույս կտեսնի:

-Ձեր երկրորդ ուղեւորությունը Երեւան ընդամենը մի քանի շաբաթ առաջ էր, այնպես չէ՞:

-Այո, մարտին: Մասնակցում էի Արեւելք-Արեւմուտք ինստիտուտի կազմակերպած սեմինարին, որը վերաբերում էր ենթառեգիոնալիզմին: Սակայն ես նաեւ սկսել էի նոր գրքիս՝ «Կոնֆլիկտի անատոմիա»-ի վրա աշխատանքս, որն ավարտվելու է 1999 թ. վերջերին եւ, հուսով եմ, հրատարակվելու է 2000 թ.-ին: Այն պահանջում էր ուսումնասիրություններ կատարել մի շարք քաղաքներում, ներառյալ Երեւանը:

-Դրան հետեւեց Ձեր այցելությունը Բաքու:

-«Կոնֆլիկտի անատոմիա» գիրքը, որի վրա սկսել եմ աշխատել, առնչվելու է Լեռնային Ղարաբաղի հակամարտության դիվանագիտական անդրադարձին: Ես ցանկանում եմ ներկայացնել որպես միջնորդ հանդես եկող երկրների եւ հակամարտության կողմերի դիրքորոշումներն այնպես, ինչպես իրենք են տեսնում դրանք: 1999 թ. մարտի ուղեւորությունս մեկն էր այն բազմաթիվ ուղեւորություններից, որոնք ինձ տանելու են այն բոլոր մայրաքաղաքները, որտեղ քաղաքականություն էր որոշվում՝ զրուցելու համար վճռորոշ դեր կատարած հնարավորինս շատ անձանց հետ: Բաքուն մեկն էր այն մայրաքաղաքներից, ուր գնացել եմ կամ գնալու եմ: Ես եղա նաեւ Փարիզում, Ժնեւում, Վիեննայում եւ Բոննում: Հետագայում մեկնելու եմ Հռոմ, Հելսինկի, Ստոկհոլմ, Մոսկվա, Թեհրան եւ Անկարա: Իմ լավ ընկեր, Ռուսաստանի դաշնության դեսպան Կազիմիրովն այժմ դեսպան է Կոստա Ռիկայում: Հուսով եմ՝ նրան նույնպես կտեսնեմ:

-Կարո՞ղ եք այդ ուղեւորությունը դնել Ձեր՝ ավելի վաղ ունեցած գաղտնի հանդիպումների համատեքստի մեջ՝ Վաֆա Գուլուզադեի հետ, որն այն ժամանակ Ալիեւի վարչակազմում Ձեր գործընկերն էր: Այն ժամանակ Ձեզ քննադատում էին այդ գաղտնի հանդիպումների համար, իսկ այժմ ոմանք քննադատում են այս ճամփորդության համար:

-Դժգոհության որոշ ակնարկներ ինձ հասել են, սակայն չեմ տեսել որեւէ հատուկ փաստարկ, թե Բաքու կատարած իմ այցելության մեջ ինչն էր սխալ, բացի նրանից, որ Ադրբեջանն այն գործածել է իր քարոզչական նպատակների համար: Ինձ համար դա անդրադարձնում է քարոզչությամբ համակվածության երեւույթը, որով էապես ու մեծագույն գուրգուրանքով միմյանց հետ են շփոթվում հասարակայնության հետ կապերը եւ հստակորեն զատորոշված նպատակներն ու դիրքորոշումները: Ես հազվադեպ եմ ուշադրություն դարձրել Բաքվում կամ այլուր ներքին քարոզչության նպատակով կատարված գործողություններին ու հայտարարություններին: Լիովին հասկանում եմ, որ դա անհարմարավետություն է պատճառել որոշ մարդկանց: Անհարմարավետությունն անհրաժեշտ, սակայն բավարար պատճառ չէ քննադատելու համար:

Կարեւոր եմ համարում նշել, որ իբրեւ քաղաքավարություն եւ ի հարգանք նախորդ կառավարությունում իմ զբաղեցրած պաշտոնի, ես պաշտոնապես տեղեկացրել եմ Քոչարյանի վարչակազմին՝ Բաքու կատարելիք իմ մոտալուտ ուղեւորության ու դրա նպատակի մասին, ինչպես նաեւ պատրաստակամություն եմ հայտնել Երեւանում գտնվելուս ընթացքում հանդիպելու իրենց հետ՝ նախքան Բաքու գնալս: Եթե իմ՝ Բաքու գնալու հարցում Հայաստանի իշխանությունները որեւէ խնդիր տեսնեին, վստահ եմ, ինձ կհայտնեին այդ մասին, քանի որ նոր վարչակազմի հետ ես ջերմ հարաբերություններ եմ պահպանել:

Թերեւս ցանկանայիք հիշել նաեւ, որ ես առաջին նախկին պաշտոնյան չեմ, որն այցելում է հակամարտության հետ առնչվող մայրաքաղաքներ: Սկսած մեր առաջին արտգործնախարարից եւ վերջացրած առաջին գլխավոր խորհրդականով, շատերն են այցելել այդ մայրաքաղաքներ եւ այլ կառավարությունների հետ քննարկել հակամարտությունը՝ առանց ներկայացնելու վարչակազմը եւ հաճախ չհամաձայնելով այդ ժամանակվա դիրքորոշման հետ: Քաղաքական կուսակցությունների բազմաթիվ ներկայացուցիչներ՝ Հայաստանից թե Սփյուռքից, տարիներ շարունակ միեւնույնն են արել՝ հաճախ իրենց կրքոտ ընդդիմությունն արտահայտելով Երեւանի քաղաքականության հանդեպ:

Տարբերությունն այն է, որ ես նաեւ Բաքու գնացի: Սակայն ինձ համար, այժմ թե մինչ այս, ավելի կարեւոր է, որ Բաքուն ավելի շատ հասկանա Հայաստանի քաղաքականությունն ու մտահոգությունները, քան ուրիշները: Ի վերջո, հայկական կողմը պետք է Բաքվին համոզի եւ Ադրբեջանի հետ ապրի իբրեւ հարեւաններ: Միջնորդները գալիս են ու գնում, լուծումներ են առաջարկում եւ փոխում առաջարկները: Սակայն հակամարտության կողմերի կենսական շահերն ու ընկալումները մնում են լուծման կարեւորագույն պայմանները:

Իմ այցելությունը, ինչպես նշեցի, նպատակ ուներ իմ ուսումնասիրության համար արձանագրելու Ադրբեջանի քաղաքականությունն այն ձեւով, ինչպես այն տեսնում են այդ երկրի ղեկավարները: Քննարկումը ոչ մի կապ չուներ միջնորդների ներկայացրած վերջին առաջարկի հետ: Եվ չէր էլ կարող կապ ունենալ, քանի որ ես ծանոթ չէի դրա բովանդակությանը: Իսկ ես բավականաչափ փորձառություն ունեմ, որպեսզի դատողություններ չանեմ՝ հենվելով սոսկ մամուլի հայտարարությունների վրա:

Ինչ վերաբերում է իմ պաշտոնավարության ընթացքում Գուլուզադեի հետ իմ հանդիպումներին, հնարավոր է, որ ոմանք համաձայն չէին բանակցություններում արդյունքի հասնելու մեր մեթոդին: Այդ քննադատություններն արդարացի էին, թե ոչ՝ կպարզվի, երբ ներկայացվի դիվանագիտական գործընթացի ամբողջական պատկերը: Ես անձնապես շարունակում եմ վստահ լինել, որ դրանք հույժ օգտակար էին: 1994 թ. մայիսին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ իրականացրած ժամանակավոր հրադադարի փոխակերպումը մշտական զինադադարի՝ նույն տարվա հուլիսին ու օգոստոսին, ձեռք է բերվել պարոն Գուլուզադեի հետ իմ ուղիղ բանակցությունների շնորհիվ: Դա վա՞տ բան էր: Հետագա հանդիպումները, վստահ եմ, հավասարապես օգտակար էին: Սակայն դրանք պահանջում են ավելի ամբողջական քննարկում, եւ պետք է մի քիչ ավելի երկար սպասենք:

-Ձեր դերը՝ մասնավորապես եւ դարաբաղյան բանակցություններն՝ ընդհանրապես, անձնավորվել են այնպիսի մարդկանց կողմից, որոնք աջակցել են այդ

գործընթացին, որում ընդգրկված էիք, բայց հատկապես այնպիսի անձանց կողմից, որոնք չեն աջակցել:

-Հիմնականում ճիշտ եք: Ելնելով բանակցվող նյութի՝ պատերազմի եւ խաղաղության կարեւորությունից, ինձ համար կարեւոր էր լիովին հասկանալ մյուս կողմերի դիրքորոշումները, դիվանագիտական բառապաշարով արտահայտված նրանց ձեւակերպումների տակ եղած նշանակությունները, նրանց իրական շահերը՝ ի հակադրություն հրապարակային կեցվածքի: Բանակցողներից ու միջնորդներից շատերի հետ ես անձնական հարաբերություններ եմ զարգացրել: Փորձել եմ հասկանալ նրանց մշակույթն ու քաղաքականությունը: Նրանց հետ քննարկել եմ երաժշտության ու գրականության մեջ իրենց նախասիրությունները, խոսել եմ իրենց ընտանիքների մասին, երբեմն նույնիսկ հանդիպել եմ նրանց ընտանիքների հետ: Դա ծնունդ է տվել խոսակցության տարբեր որակի՝ հանգեցնելով ավելի մեծ վստահության ու հավաստիության, քան թույլ է տալիս առօրյա դիվանագիտությունը: Ըմբռնելով պրոբլեմի խորքը, ի վերջո, այն լուծելը դառնում է ավելի դյուրին: Դա ավելի քան դիպուկ է գործում նույնիսկ մեր հիմնական հակառակորդների առնչությամբ:

Սրանցից ոչ մեկը չի նվազեցնում հայկական կողմի շահերը ներկայացնելու եւ պաշտպանելու ունակությունը: Եվ, անշուշտ, սրանցից ոչ մեկը չի նշանակում, թե ես պատասխանատու եմ պարոն Գուլուզադեի հրապարակային հայտարարությունների համար, որոնք հաճախ ներքին սպառման նպատակ ունեն՝ ճիշտ այնպես, ինչպես նա էլ պատասխանատու չէ իմ հայտարարությունների կամ այն բանի համար, որ ցանկություն չեմ ունեցել պատասխանելու իր ամեն մի հայտարարությանը կամ այլ մարդկանց կողմից իմ դեմ բարձրացվող ամեն մի քննադատությանը:

Երկրորդ, ոմանց համար ավելի հեշտ է քաղաքականության նկատմամբ իրենց հակադրությունն անձնավորելը, հասարակության մեջ անբարեհաճություն ու անվստահություն սերմանելը՝ նրանց հանդեպ, ում քաղաքականությանն իրենք համաձայն չեն: Ոմանք ավելի վարպետ են ընդդիմախոսին ապամարդկայնացնելու գործում, քան պրոբլեմի տարբեր լուծումներ քննարկելու մեջ: Քննադատության մեծ մասը հիմնված է իրական գործընթացների եւ առկա փաստաթղթերի անտեսման վրա: Դա գալիս է մեր հակառակորդների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ գործակցելու, նրանց ուղղակիորեն իբրեւ հարեւան եւ ապագա գործընկեր դիտելու՝ մեր քաղաքականության հանդեպ ռեֆլեկտիվ հակազդեցությունից:

Այս երեւույթը ես հանգամանորեն քննարկել եմ իմ՝ «Պետականության մարտահրավերը» գրքում, ուր համարում եմ, որ Հայաստանի վերջին իրադարձությունների մեծագույն պատճառը Ղարաբաղի հիմնախնդրի լուծման

այլընտրանքների շուրջ լուրջ բանավեճի բացակայությունն է: Նման բանավեճ պետք է ծավալվեր հատկապես նախագահ Տեր-Պետրոսյանի հրաժարականին հաջորդած նախագահական ընտրարշավի ընթացքում: Այդ բանավեճը տեղի չունեցավ. միայն մի խումբ մարդիկ էին տեղյակ 1997 թ. սեպտեմբերի այն առաջարկի մանրամասներին, որը հանգեցրեց Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականին, բայց գրեթե յուրաքանչյուր ոք վստահ է, որ այն վատն էր: Դա ճիշտ լինի, թե սխալ, ժողովուրդը, որի անունից բոլորը խոսում են, այդ գործընթացին մաս չի կազմել:

Քաղաքականության անձնավորումը ռացիոնալ քննարկումներից խուսափելու էժանագին, սակայն, հավանաբար, արդյունավետ մեթոդ է:

-Ինչպե՞ս եք բացատրում այդ հարցերի շուրջ որեւէ լուրջ քաղաքական կամ ինտելեկտուալ բանավեճի բացակայությունը: Նախագահը մամուլի ասուլիս է տալիս Հայաստանի քաղաքականության մեծագույն հարցի՝ Ղարաբաղյան հիմնախնդրի մասին, միեւնույն նյութի վերաբերյալ երկարաշունչ մի հոդված է գրում, եւ նրա բարձրացրած հարցերի մասին գրեթե որեւէ էական բան չի ասվում:

-Հայաստանում, սակայն շատ ավելի շատ Սփյուռքում, քաղաքական խոսակցությունը գաղափարախոսականացված է: Ծայրահեղական դիրքորոշումներն ընդունված են իբրեւ նորմ, բանավեճը բաղկացած է այն պարզամիտ գաղափարախոսության զոհասեղանին մշտական տուրք մատուցելուց, որը կայանում է աշխարհը բարեկամների ու թշնամիների բաժանելու եւ ապա թշնամուն ապամարդկայնացնելու մեջ:

Հատկապես Սփյուռքում գոյություն ունի մտային վախ՝ հարցերին այլ կերպ մոտենալու կամ այլընտրանքային վերլուծություններ առաջադրելու նկատմամբ: Եթե մեկը զերծ է մնում «թուրքի» հանդեպ ատելությունն իբրեւ գաղափարախոսության կամ քաղաքականության հիմք ընդունելուց, անմիջապես պիտակավորվում է որպես սրիկա կամ դավաճան: Գաղափարախոսությունները, ազգային թե այլ, խնդիրներ չեն լուծում, առավել եւս այն խնդիրները, որոնց բախվում է մեր ժողովուրդը Հայաստանում եւ Ղարաբաղում: Մեծ պայքարն, ինչպես բացատրում եմ իմ գրքում, ընթանում է մեր ժողովրդի համար՝ նորմալ գոյավիճակի որոնման վրա հիմնված քաղաքականության եւ որոշ առաջնորդների մտքում եղած գաղափարախոսականացված աշխարհայացքի միջեւ. առաջնորդների, որոնք կուզենային հայ ժողովրդին տեսնել ծառայելիս մի «իդեալի», մի ինչ-որ բարձրագույն տեսիլքի՝ անշուշտ, իրենց սեփական ճաշակով սահմանված:

Քաղաքականության անձնավորումը, առաջնորդների միջեւ փոխադարձ հակակրանքներն ու հակամարտությունները, իշխանության համար մղվող պայքարը նույնպես հանդիսանում են պրոբլեմներ:

Լրագրողի մասնագիտությունը Հայաստանում դեռեւս հասունության չի հասել: Անհիմն պնդումների ստուգումը, փաստերի կրկնակի ստուգումը, փաստի տարանջատումը կարծիքից դեռեւս չափանիշ չեն դարձել: Թերեւս հիշեք, թե ինչպես մի օր հայկական թերթերը հանկարծակիորեն ու իրենց հարմար կերպով, խախտելով թուրքական թերթերն անվստահելի համարելու իրենց երկարամյա ավանդույթը, թուրքական մի թերթից մի բան վերատպեցին, ուր ասվում էր, որ ես Անկարայում հայտարարել եմ, թե Ցեղասպանությունը պետք է մոռացվի: Հայաստանի կամ Սփյուռքի որեւէ լրագրող երբեւէ չզանգահարեց ինձ՝ հարցնելու, թե՝ «Ժիրայր, դու իսկապե՞ս Թուրքիայում նման հայտարարություն ես արել»:

-Ժիրայր, Դուք Թուրքիայում ասե՞լ եք, որ մենք ցանկանում ենք մոռանալ Ցեղասպանությունը:

-Իհարկե ոչ: Բայց ուրախ եմ, որ տվեցիք այդ հարցը:

-Ձեր գրքում Դուք քննարկե՞լ եք Հայաստանի քաղաքական մշակույթը կամ Տեր-Պետրոսյանի ճակատագրի փոփոխության հարցը:

-«Պետականության մարտահրավերը» հիմնականում Հայաստանի, ինչպես նաեւ Սփյուռքի քաղաքական մշակույթի վերաբերյալ իմ անձնական տեսակետն է: Այնտեղ հարցեր են արծարծվում, որոնք ինձ հետաքրքրել են երկար ժամանակ, Հայաստանում աշխատելուցս շատ ավելի առաջ, ինչպես նաեւ հարցեր, որոնք ծագել են անկախության նվաճմանը զուգընթաց: Այն, փաստորեն, քննարկում է կուսակցությունների ու առաջնորդների դիրքորոշումների մեջ առկա պարադոքսներն ու ակնհայտ հակասությունները, երբ դրանք բախվում են Ղարաբաղի հիմնախնդրի եւ անկախության հետ:

Օրինակ, ես հարց եմ տալիս, թե այդ ինչպե՞ս պատահեց, որ քաղաքական կուսակցությունները, որոնք Տեր-Պետրոսյանի հրաժարականն էին պահանջում՝ այն պատճառով, որ վերջինս մերժում էր ճանաչել 1992 թ. ամռանը Ղարաբաղի անկախության միակողմանի հռչակումը, նույն պահանջը չեն ներկայացնում եւ նույնիսկ այդ հարցը չեն բարձրացնում, երբ իրենց ղեկավարներն այժմ վարչակազմի մաս են կազմում: Ինչպե՞ս եղավ, որ 1988 թ. աշնանը Սփյուռքի քաղաքական երեք կուսակցությունները դատապարտեցին «Ղարաբաղ» կոմիտեին՝ ի աջակցություն Ղարաբաղի իրավունքների կազմակերպվող գործադուլների քարոզչության համար, քանի որ դա կարող էր վնաս հասցնել Հայաստանի տնտեսությանը եւ Մոսկվայի հետ հարաբերություններին, սակայն նրանցից գոնե երկուսն այժմ առավելապաշտական դիրքորոշում են որդեգրել եւ

հանուն այդ առավելապաշտական դիրքորոշման ենթարկվում են ամեն բան կորցնելու վտանգին: Նման հարցերի ցանկը շատ մեծ է:

Գիրքը քննարկում է անձեռնմխելիության վերածված մի շարք համոզմունքներ եւ կաղապարված դիրքորոշումներ, որոնք օգնում են բացատրելու այդ հակասությունները: Այդ դիրքորոշումներն են, որ տարանջատում են մի կողմից՝ այն ղեկավարներին, որոնք պատրաստ են ստանձնելու երկուստեք ընդունելի փոխզիջումների հիման վրա Ղարաբաղի հիմնախնդրի լուծման պատասխանատվությունը, իսկ մյուս կողմից՝ նրանց, ովքեր ցանկանում են ամեն բան՝ ցանկանալով նաեւ ամեն բան վտանգի ենթարկել՝ այն վստահությամբ, որ միշտ կարող են ուրիշ որեւէ մեկին մեղադրել կորուստների համար: Կարծում եմ, որ մենք բավականաչափ հերոսներ ու նահատակներ ենք ունեցել: Քաղաքականության իմաստն է խուսափել այնպիսի իրադրություններից, որոնցից կարող ենք սոսկ բարոյական հաղթանակներ ակնկալել:

Այժմ Ձեր հարցի երկրորդ մասի վերաբերյալ. գրքում ես քննարկում եմ Տեր-Պետրոսյանին՝ ոչ թե իր անձնական կարիերայի, այլ իր քաղաքականության համատեքստում՝ բացի նրա հրաժարականի հանգամանքներին վերաբերող հատվածից: Այդ վերջին հարցի՝ իմ ընկալումը տարբերվում է հարցի շուրջ առկա առօրյա իմաստնությունից: Որեւէ մեկի կողմից անիրատեսական կլիներ այն ակնկալությունը, թե համաժողովրդական շարժման որեւէ առաջնորդ, որը դառնում է անկախ պետության նախագահ, երկար ժամանակ պահպաներ իր ժողովրդականությունը: Հիշեք. այն երկիրը, որ նա էր ղեկավարում, հենց նոր էր անջատվել մի կայսրությունից, որի տնտեսությունը կործանված էր: Դա ցամաքով շրջապատված երկիր է, որը պետք է պատերազմի մասնակցեր՝ պաշտպանելու համար Ղարաբաղի հայության շահերը, եւ պետք է ապրեր «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» պայմանի ներքո: Տեր-Պետրոսյանը, փաստորեն, երկիրը ղեկավարել է մեկ տասնամյակ: Սակայն Հայաստանում առկա հանգամանքներում մեկ տասնամյակը ավելի նման էր պատմագիտության արժանի մի քանի տասնամյակի: Հիշեք, թե պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը քանի հատոր ստիպված եղավ գրելու՝ ամփոփելու համար Առաջին Հանրապետության երկուսուկես տարին:

Լեւոն Տեր-Պետրոսյանն այդ նույն ժողովրդին կառավարեց տասը տարի: Կարծում եմ՝ ժամանակի հետ նվաճումների գնահատումը կհեշտանա: Իմ գիրքն արծարծում է մի շարք հարցեր ու քաղաքականություններ, սակայն չի փորձում տալ այդ գնահատականը:

-Հայաստանում ի՞նչն է ավելի հարգի. քաղաքական կուսակցությունն՞ը, թե՞ մտավորականությունը:

-Ես չեմ կարող խոսել Հայաստանում մտավոր դասի մասին: Կան բազմաթիվ պայծառ մտածողներ ու լրագրողներ, սակայն դեռեւս դասակարգ չի ձեւավորվել նախկին մտավորականության ստվերի տակից: Հայաստանում մտավորական բառը կարծես միտում ունի կապվելու անցյալի էլիտար խմբի հետ, որը կորցրել է ԽՍՀՄ իշխանության օրոք իր ունեցած արտոնյալ դիրքը՝ առանց կորցնելու արտոնվածության իր զգացումը: Մինչ ոմանք ընդունեցին անկախությունն ու բարեփոխումները եւ փորձեցին հարմարվել նոր իրականությանը, մյուսներն իրենց ողջ եռանդն ու հանրաճանաչությունը գործի դրեցին՝ ջանալով վերանվաճել իրենց նախկին արտոնությունները եւ միշտ խոսելով ժողովրդի անունից:

Մտավորականները պետք է հարցեր առաջադրեն (մյուսները, ներառյալ քաղաքական գործիչները, ժամանակ ու հակում չունեն հարցեր հնչեցնելու). նոր հայացքներ ներկայացնեն անցյալի ու ապագայի մասին, նոր պատկերացումներ՝ ներկայի մասին: Օրինակ՝ չպե՞տք է մի լավ հետազոտություն կատարվեր անցած 70 տարիների եւ տնտեսության, սոցիալական կառույցների ու արժեքների վրա համակարգի ունեցած ազդեցության, քաղաքական մշակույթի եւ ներկայիս հասարակությունը կազմող հաստատությունների վերաբերյալ: Հայաստանն ու հայ ժողովուրդը հո հանկարծ չհայտնվեցի՞ն քարտեզի վրա՝ գոյանալով ոչ մի տեղից: Հնարավո՞ր է, որ կոռուպցիան ծագած լինի անկախության հաջորդ առավոտյան, եւ «Ղարաբաղ» կոմիտեի հետ, կամ նույնիսկ նրանց պատճառով: Գոյություն չունե՞ն, արդյոք, Հայաստանի ինքնության եւ ապագայի վերաբերյալ տարբեր տեսակետներ:

Հին մտավորականությունը ձեռնամուխ չեղավ այդ խնդրին: Նոր մտավորականությունը դեռեւս պետք է գա, չնայած, ինչպես ասացի, կան պայծառ ու խիզախ ուղեղներ՝ ինչպես հին, այնպես էլ նոր սերունդների մեջ:

Ինչ վերաբերում է քաղաքական կուսակցություններին, չեմ կարծում, թե Հայաստանի ժողովուրդը նրանց նկատմամբ որեւէ հավատ ունի: Ժողովրդի բացարձակ մեծամասնությունը որեւէ առնչություն չունի կուսակցությունների հետ, իսկ կուսակցություններն՝ իրենք, գրեթե ոչինչ չեն արել՝ փարատելու համար «կուսակցություն» գաղափարի հանդեպ ժողովրդի մեջ տարիներ շարունակ արմատավորված անվստահությունը, որն արդյունք էր Կոմունիստական կուսակցության իշխանության:

Պետք է նաեւ հավելեմ, որ չնայած Սփյուռքն ունի բազմաթիվ անհատներ, որոնք մտավորական են բառի արեւմտյան իմաստով, գոյություն չունի սփյուռքյան մտավորականություն, որը հավաքականորեն բարձրացնի ու քննարկի հայ ժողովրդի փորձառությանը, անցյալին, ներկային ու ապագային վերաբերող հիմնարար հարցեր: Երբեմն այդ կերպ վարվելու փորձեր եղել են, սակայն դրանք հաջողության չեն հասել տեւական երկխոսություն պահպանելու հարցում:

Դժբախտաբար, պատմաբանները գործել են ավելի շատ լրագրողների ու քաղաքական գործիչների նման, մինչդեռ քաղաքական ղեկավարները պարտադրել են պատմության իրենց սեփական մեկնությունը:

- Դեռեւս հնարավո՞ր են փոխակերպումներ: Արդյո՞ք «Երաժշտական աթոռների» պես մի խաղի հետ գործ ունենք: Մենք տեսանք, թե ինչպես երկրապահներն անջատվեցին ՀՀՇ-ից: Դա լիովին կամայի՞ն է:

-1988 թ.-ին Շարժումն սկսելուց հետո մշտապես փոխակերպումներ եղել են: Ես զարմացած էի՝ տեսնելով այդքան երկար ժամանակ, դժվարագույն պայմանների առկայությամբ «Ղարաբաղ» կոմիտեի ու ՀՀՇ-ի միավորված մնալը: Երբ որոշ պրոբլեմներ լուծվում են, եւ այլ խնդիրներ են ի հայտ գալիս, ղեկավարներն իրենց մտածողությունն առաջ են տանում, եւ տարաձայնություններ են գոյանում: Հատկապես, երբ նրանք իշխանության են գալիս: Սա բավականին նորմալ, նույնիսկ առողջ երեւույթ է: Այլընտրանքային տեսակետներն ու լուծումներն անհրաժեշտ են հասարակության եւ պետության համար:

Սակայն վտանգավոր է դառնում, երբ տարբերությունները եւ տրված հնարավորությունների միջեւ կատարվող ընտրությունները ներշնչվում են անձնական համակրանքներով ու հակակրանքներով, անձնական հավակնություններով ու վրեժխնդրությամբ: Ընտրական կոալիցիաները նույնպես վախենալիք երեւույթ չեն, քանի դեռ հիմնված են հայացքների ընդհանրության եւ ղեկավարների կողմից միասին գործելու ունակության վրա: Օրինակ՝ ես հասկանում եմ Կարեն Դեմիրճյանի «Ժողովրդական» կուսակցության հետ երկրապահների գործակցումը. կարծում եմ՝ նրանք երկուսն էլ դեմ են մեծ օբյեկտների սեփականաշնորհմանը: Վստահ չեմ, սակայն, որ նրանց կարծիքները կհամընկնեն Ղարաբաղյան հակամարտության հարցում:

Քաղաքական կուսակցություններից շատերը չունեն ճանաչված ղեկավարներ, մինչդեռ մի մասն ունի ղեկավարներ եւ չունի հետեւորդներ: Հայաստանի անձնավորված քաղաքական մշակույթի մեջ երկու դեպքերն էլ պրոբլեմ են ներկայացնում եւ այլասերում գործընթացն ու ըմբռնումը: Հայաստանն ունի չափազանց շատ նախագահ-ծնվածներ, այլ հանգամանքներում դա կարող էր մեծ առավելություն լինել:

-«Լը Մոնդ» թերթը ճի՞շտ էր. 1998 թ. փետրվարին կատարվածն իրո՞ք հեղաշրջում էր՝ հանուն ոչնչի:

-Հնարավոր է: Դեռեւս չգիտեմ: Այն ժամանակ դեռ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը վստահ էր, թե որոշ բաներ նախագահ Տեր-Պետրոսյանից տարբեր կամ ավելի լավ անելով, կարող է առաջացնել նշանակալի տնտեսական աճ՝ բավարար ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման համար եւ առանց

խաղաղության պայմանագրի կամ այնպիսի խաղաղության պայմանագրով, որը հայկական կողմին ավելին կտա, քան առաջարկված էր 1997 թ. սեպտեմբերին:

«Լը Մոնդի» հոդվածագիրը Երեւան էր այցելել նախագահական նոր ընտրություններից հետո, ներքին ու արտաքին քաղաքականության մեջ փնտրել էր փոփոխության նշույլներ եւ, առանձնապես, չէր կարողացել գտնել:

Ձեր հարցի պատասխանը կտրվի ժամանակի ընթացքում: Նախագահ Քոչարյանը կարո՞ղ է ապացուցել իր տեսակետը: Ես համաձայն չեմ նրա տեսակետներին ու վերլուծություններին: Հնարավոր է, որ նա ճիշտ լինի, սակայն դա պետք է ապացուցվի: Չեմ կարծում, թե արդեն ապացուցվել է: Չեմ կարծում նաեւ, թե կարելի է հավերժորեն սպասել՝ դա հասկանալու համար: Մի բանում վստահ եմ. եթե նախագահ Քոչարյանն ապացուցելու է, որ ինքը ճիշտ է, իսկ «Լը Մոնդը»՝ սխալ, նա պետք է ստանա այն աջակցությունը, որ կարող է ստանալ, մասնավորապես, նրանց կողմից, ովքեր օժանդակեցին Տեր-Պետրոսյանի դեմ նրա գործողություններին եւ իբրեւ նախագահ իր ընտրությանը: Առկա խորհրդականները, որոնք նրան պաշտոնանկ անելու միջնորդագիր են ստորագրում կամ նրա դեմ փողոցներում ցույցեր կազմակերպում, ճիշտ ուղղությամբ չեն շարժվում: Նախագահի հետ չհամաձայնելու մեջ վատ բան չկա, սակայն դա անելը հրապարակային՝ մնալով իրենց պաշտոնին, օժանդակություն ցույց տալու արտառոց ձեւ է եւ միասնականության տարօրինակ դրսեւորում:

-Հայ քաղաքական մտածողության վերաբերյալ Ձեր գիրքը շուտով լույս կտեսնի: Ի՞նչ կասեիք Ձեր հաջորդ գրքի մասին:

-«Պետականության մարտահրավերը» շուտով լույս կտեսնի անգլերենով: Այն թարգմանվում է այլ լեզուներով եւս, ներառյալ հայերեն ու ֆրանսերեն: Ես դեռեւս լիովին չեմ խորասուզվել հաջորդ գրքիս համար ուսումնասիրությունների մեջ, որի համար վերջերս մեկնել էի Երեւան, Բաքու եւ մնացած վայրերը: Ինչպես արդեն ասել եմ, այն կոչվում է «Կոնֆլիկտի անատոմիա. Լեռնային Ղարաբաղը եւ նոր աշխարհակարգը»: Ես ցանկանում եմ հակամարտությունը զետեղել իր միջազգային համատեքստի մեջ: Այս գրքում, նախ, հետեւելու եմ, թե ինչպես է հակամարտությունը տասը տարվա ընթացքում տեղական հարցից վերածվել միջազգային նշանակության պրոբլեմի: Երկրորդ մասը վերաբերելու է բանակցությունների տարբեր ֆորումներին՝ ատյաններին, միջնորդական ջանքերի ընթացքում գործադրված տարբեր մեթոդներին եւ տարբեր երկրների ու միջազգային կազմակերպությունների ունեցած դերին:

-Ի՞նչ հեռահար ծրագրեր ունեք: Ցանկանու՞մ եք դասավանդել հայագիտական հետազոտությունների բնագավառում:

-Վստահ չեմ, թե կցանկանայի վերադառնալ համալսարանական գործին՝ լրիվ դրույքով դասավանդմամբ: Դա անարդարացի կլիներ ոչ միայն իմ, այլեւ ուսանողների հանդեպ: Ես այնքան երկար եմ կտրված եղել դասախոսական աշխատանքից: Չէի առարկի մեկ-երկու դասընթացին՝ պարզապես իբրեւ հարցերի մասին ավելի կազմակերպված ձեւով մտածել կարողանալու միջոց:

Ժամանակն է, որ ավելի երիտասարդ գիտնականներն իրենց տեղը գրավեն: Ես գոհ եմ, որ Թաֆթս համալսարանի նորաստեղծ Հայագիտական հետազոտությունների ամբիոնի վարիչի պաշտոնն ստացավ մի երիտասարդ գիտնական: Լիովին արժանի մեկը: Վստահ եմ, որ Ինա Բախտյանց Մըքքեյբը հայոց պատմությունը նոր դիտանկյունից ուսումնասիրելու գործում մեծ ներդրում կունենա:

Մեծապես երջանիկ էի նաեւ տեսնելով մեկ այլ երիտասարդ գիտնականի՝ Ստեֆանի Պլացի նշանակումը Միչիգանի համալսարանի Ալեքս Մանուկյանի անվան ժամանակակից հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում: Կարծում եմ՝ անթրոպոլոգիան, սոցիալական հոգեբանությունը, տնտեսագիտությունը եւ քաղաքագիտությունը կարող են նոր հեռանկարներ բացել հայագիտական հետազոտությունների համար, հեռանկարներ, որոնք կարող են ավելի լավ բացատրել, թե ինչ է կատարվել եւ ինչ է կատարվում այսօր, քան ավանդական պատմագիտությունը, ինչպես հաճախ պատահում է:

Պատմության վրա կենտրոնանալը հասկանալի էր, երբ մենք գործ ունեինք հայոց ինքնության օրինականացման հետ: Այսօր չունենք այդ խնդիրը: Հայոց պատմությունն օրինականացված է, եւ Հայաստանն անկախ պետություն է: Իր բոլոր խնդիրներով ու մարտահրավերներով հանդերձ, փաստորեն, դա իրականում ինքնության ավելի լավ աղբյուր է, քան վերացարկված, գաղափարախոսականացված եւ իդեալականացված պատմությունը: Խնդիրն այժմ հայագիտական հետազոտություններն օրինականացնելն ու երիտասարդացնելն է՝ ընդհանրապես, որպեսզի այն կարողանա զբաղվել նաեւ ժամանակակից հարցերով, եւ դա անել այնպես, ինչպես պատշաճ է սոցիալական գիտություններին:

Ինչ վերաբերում է ինձ, 1999 թ.-ին ես ավարտելու եմ իմ նոր գիրքը եւ տարածաշրջանային ծրագրերով սերտորեն գործակցելու եմ IREX-ի ու Արեւելք-Արեւմուտք ինստիտուտի հետ: Մնացածը՝ կտեսնենք:

Ապրիլ, 1999 թ., AIM ամսագիր, թարգմանվել է անգլերենից